04 AUG 2010

# ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԱԼԼԱՀՎԵՐԴՈՒ ՇՐՋԱՆԱ-
ՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

**1936** Թ. ՓԵՏՐՎԱՐԻ **24**-Ի ՆԻՍՏՈՒՄ

63
Ա-31

14.643

Գլավլիտի լիազոր Ա—319. Կիրովականի տպարան

Պատվեր № 208

63
Ա-31

# ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԱԼԼԱՀՎԵՐԴՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ 1936 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ՆԻՍՏՈՒՄ

## 1936 Թ. ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

### 1. *ՍԵՐՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ*

*Բերքատվության բարձրացման լավագույն միջոցառումներից մեկն էլ լավորակ, առողջ և մաքուր սերմացու գործածելն է։ Սերմը զտելն ու տեսակավորելը պետք է կատարվի բացառապես տրիերներով, որի կատարումը 100%-ով պարտադիր է կոլ-*

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԽՍՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1 FEB 2013

տնտեսությունների և մենատնտեսների համար։

2. Պարտադիր է սերմֆոնդի լաբորատոր ստուգումը յերկու նվագ՝ 1. սերմֆոնդի առանձնացման ժամանակ, իսկ յերկրորդը ցանքից 20 որ առաջ։ Արգելվում է ցանքը կատարել առանց սերմ ստուգող լաբորատորիայի սերմացույի վորակը հաստատող փաստաթղթի։

3. Ախտահանման յենթակա յեն ցորեն, գարի և հաճար։ Չոր ախտահանումը կատարվելու է բացառապես մեքենաներով։

4. Գարնանացանի սերմի զտման աշխատանքները ավարտվում են մինչև դեկտեմբերի տասը՝ իսկ ախտահանումը տարվում է զուգընթաց ցանքի հետ։

Աշնանացանի սերմերի զտումը կատարել կալսելու ժամանակ։

## 2. ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Վարի խորությունը, վորպես բերքատվության բարձրացման հիմնական միջոցառումներից մեկը, սահմանել հացահատիկային կուլտուրաների համար 18—20 սմ. խորությամբ, իսկ արմատապտուղների և պալարապտուղների համար 20—22 սմ. խորությամբ։



### ՑԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐ

| Գյուղերի անունը | Հացահատիկ. կուլտուրա. | | Խոտաբույսեր | | Կարտոֆիլ | | Ծխախոտ, Կտավահատ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Սկիզբ | Վերջը | Սկիզբ | Վերջը | Սկիզբ | Վերջը | Սկիզբ | Վերջը |
| Աթան, Անհիզոր, Շամուտ, Լորուտ, Ծաղկաշատ, Կաճաճկուտ։ | 2/4 | 12/4 | 1/4 | 2/4 | 1/4 | 20/4 | 20/4 | 1/5 |
| Մարաց, Քարինջ, Դսեղ, Մ. Բագդի, Ջիլիզա։ | 27/3 | 7/4 | 25/3 | 27/3 | 25/3 | 15/4 | 15/4 | 30/4 |
| Ղաչաղան, Կ. Աղեգի, Մղարթ, Ծաթեր, Այգեհատ, Արդվի, Ուգունլար, Ամոջ, Աքորի, Սանահին, Ակներ, Այլահվերդի, Հագվի, Հաբլաբ, Նեղուց, Սանահին։ | 22/3 | 30/3 | 20/3 | 22/3 | 25/3 | 5/4 | 1/5 | 10/6 |
| Ճոճկան, Արճիս, Լճկաձոր, Կողբ, Բարանա, Դովեղ, Ղալաչա, Քոբբլու, Շնող։ | 12/3 | 20/3 | 10/3 | 15/3 | 15/3 | 20/3 | 1/5 | 10/6 |
| Սանահին, Հաղբատ, Շնող լեռնային մասերում | 25/3 | 5/4 | | | | | | |

1 FEB 2013

տնտեսությունների և ձեռնարկությունների համար:

2. Պարտադիր է սերմֆոնդի լաբորատոր ստուգումը յերկու նվազ՝ 1. սերմֆոնդի առանձնացման ժամանակ, իսկ յերկրորդը ցանքից 20 օր առաջ: Արգելվում է ցանքը կատարել առանց սերմ ստուգող լաբորատորիայի սերմացուի վորակը հաստատող փաստաթղթի:

3. Ախտահանման յենթակա յեն ցորեն, գարի և հաճար: Չոր ախտահանումը կատարվելու յե բացառապես մեքենաներով:

4. Գարնանացանի սերմի զտման աշխատանքները ավարտվում են մինչև դեկտեմբերի տասը՝ իսկ ախտահանումը տարվում է զուգընթաց ցանքի հետ:

Աշնանացանի սերմերի զտումը կատարել կալսելու ժամանակ:

## 2. ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Վարի խորությունը, վորպես բերքատվության բարձրացման հիմնական միջոցառումներից մեկը, սահմանել հացահատիկային կուլտուրաների համար 18—20 սմ. խորությամբ, իսկ արմատապտուղների և պալարապտուղների համար 20—22 սմ. խորությամբ:



### ՑԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐ

| Գյուղերի անունը | Հացահատիկ. կուլտուրա. | | Խառաբույսեր | | Կարտոֆիլ | | Ծխախոտ, Կտավահատ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Սկիզբ | Վերջ | Սկիզբ | Վերջ | Սկիզբ | Վերջ | Սկիզբ | Վերջ |
| Աթան, Անիփոր, Շամուտ, Լոռուտ, Ծաղկաշատ, Կաճաճկուտ: | 2/4 | 12/4 | 1/4 | 2/4 | 1/4 | 20/4 | 20/4 | 1/5 |
| Մարաց, Քարինջ, Դսեղ, Ս. Բաղդի, Ջիլիզա: | 27/3 | 7/4 | 25/3 | 27/3 | 25/3 | 15/4 | 15/4 | 30/4 |
| Ղաչաղան, Կ. Աղեդի, Մղարթ, Ծաթեր, Այգեհատ, Արդվի, Ուզունլար, Ամոջ, Աքորի, Սանահին, Ակներ, Ալլահվերդի, Հագվի, Հախպատ, Նեղոց, Սանահին: | 22/3 | 30/3 | 20/3 | 22/3 | 25/3 | 5/4 | 1/5 | 10/6 |
| Ճոճկան, Արճիս, Լճկաձոր, Կողբ, Բարանա, Դովեղ, Ղալաչա, Քոբրլու, Շնող: | 12/3 | 20/3 | 10/3 | 15/3 | 15/3 | 20/3 | 1/5 | 10/6 |
| Սանահին, Հաղպատ, Շնող լեռնային մասերում | 25/3 | 5/4 | | | | | | |

## ՑԱՆՔԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՑԵՆՏՆԵՐՈՎ

| | Ցորեն | | Գարի | | Վիկա | | Կորնգան | | Հաճար | Կարտոֆիլ | Եգիպտաց. սիլոսի | Արեվածաղ. սիլոսի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ջրբ. | Չոր | Ջրբ. | Չոր | Ջրբ. | Չոր | Ջրբ. | Չոր | Չոր | | | |
| Դսեղի յենթաշրջ. | 1,4 | 1,6 | 1,5 | 1,7 | 1,00 | 1,20 | 1,00 | 1,20 | 1,6 | 22 | 0,6 | 0,25 |
| Ուզունլարի յենթ. | 1,4 | 1,6 | 1,6 | 1,8 | 1,00 | 1,2 | 1,00 | 1,2 | 1,6 | 23 | 0,6 | 0,25 |
| Մանեսի յենթաշրջ. | 1,4 | 1,6 | 1,5 | 1,7 | 1,00 | 1,2 | 1,00 | 1,2 | 1,6 | 22 | 0,6 | 0,25 |
| Շնող, Բարանա յենթաշրջաններ | 1,3 | 1,5 | 1,4 | 1,6 | 1,1 | 1,2 | 1,00 | 1,2 | 1,5 | 22 | 0,6 | 0,25 |



Արգելվում է ցանքատերերին շարքացանի պլանը փոխարինել շաղացանով:

2. Ցանքը կատարել նախապես հերկված հողում, ցանքի ծածկումը պետք է կատարվի զիգ-զագ փոցխերով:

3. Հողի կազմությունը (ստրուկտուրան) պահպանելու համար հերկը պետք է կատարել հողի հասունացած ժամանակ (քիչ յե-կած):

## 5. ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Հողբաժնի կողմից իջեցված պարարտացման պլանը պարտադիր կերպով պետք է ցանքատերերի կողմից կատարվի անփոփոխ:

2. Այն ցանքատերերը, վորոնք իրենց ունեցած գոմաղբը չեն օգտագործում, գյուղխորհուրդին իրավունք է վերապահվում այդպիսին տրամադրել այն ցանքատերերին, վորոնք պարարտանյութի կարիք են զգում:

## 6. ՑԵԼԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐ

| | Սկիզբ | Վերջ |
|---|---|---|
| Վաղ ցել | 20/III | 1/V |
| Ամռան ցել | 1/VI | 20/VII |
| Ցրտահերկ | 5/III | 11/X |

## 7. ՇԱՐՔԱՀԵՐԿ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՑԱՆՔԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ

1. Կարտոֆիլին, արմատապտուղներին և ծխախոտին հատկացնում են անհամեմատ վորակավոր, պարարտացված հողամասերը, վորոնց նախապատրաստումը ցանքի համար պետք է կատարվի աշնանից, այդ տարածությունների համար կատարելով ցրտահերկ:

2. Յուրաքանչյուր հեկտարին կարտոֆիլի ցանք, կատարել հետևյալ ձևով՝ շարքը-շարքից 60—80 սմ. հեռու, բույսը-բույսից 40—50 սմ. հեռավորությամբ: Արգելվում է պալարի տնկումը հատած ձևով:



3. Կարտոֆիլի և արմատապտուղի քաղհանը պետք է կատարվի յերկու անգամ:

4. Կարտոֆիլի բուկ տալը առնվազն պետք է կատարվի յերկու անգամ մինչև կարտոֆիլի ծաղկելը:

Կարտոֆիլի 1-ին բուկ տալ, յերբ կարտոֆիլի թուփն ունի 18—20 սմ. բարձրություն. առաջին բուկլիցից 8—12 որից հետո կատարել յերկրորդ բուկլիցը:

## 8. ՑԱՆՔԻ ԽՆԱՄՔԸ

1. Գարնանացանը կատարելուց 20 որից հետո սկսել ցանքերի քաղհանման աշխատանքները, առաջին հերթին աշնանացանինը. քաղհանը կատարվելու յե յերկու անգամ-այս աշխատանքները ավարտվելու յեն մինչև հացահատիկի խողովակ գցելը: (Վերջացնել մինչ բույսերի ցողուն կազմելը):

2. Հնձել ճանապարհների, միջնակների, առուների մոտ գտնված բոլոր մոլախոտերը, մինչև նրա ծաղկելը: Քաղհանած և հնձած մոլախոտը հավաքել և հեռացնել ցանքից:

3. Վաղ գարնանը սկսել վարելահողերի

քարերի հավաքը այն հաշվով, վոր մինչև ցանքի աշխատանքները ավարտված լինեն։ Հավաքած քարերը վոչ մի դեպքում չթողնել դաշտերի կամ միջնակների մեջ, այլ հավաքել ճանապարհների մոտ, հետագայում հեռացնելով նաև ճանապարհից։

## 9. ՊԱՅՔԱՐ ՑԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՄ

1. Խստիվ արգելվում է ցանքադաշտերում անասունների մուտքը մինչև բերքահավաքի ավարտումը։ Ցանքի պաշտպանության համար, ցանքատերերի հաշվին նշանակվում են հանդապահներ՝ հատուկ վարձատրությամբ՝ վորոնց ոժանդակության ու հսկողության գործը դրվում է մ/ը. վարչության ու գյուղխորհուրդների վրա։

2. Գարնանացանի սկզբից բոլոր կոլխոզներում նշանակվում են հսկիչներ բերքը հափշտակումներից և հրդեհից պահպանելու նպատակով. կալերում դեղերի մոտ մշտական պետք է պահվի տակառներով



ջուր և վորոշ չափով հող ու ավազ, ինչպես նաև պետք է լինեն պահակներ։

3. Կալերը պետք է լինեն կենտրոնացված, գյուղից 100 մետր հեռավորության վրա։

4. Բերքահավաքը, հունձը, տեղափոխումը և կալսումը սկսվում է միաժամանակ. չի թույլատրվում այստեղ հերթականություն մտցնել։

5. Մինչ բերքահավաքը կոլտնտ. վարչությունը հողբաժնի, ՄՏՍ-ի հետ պարտավոր է ստուգել կոլխոզի բոլոր ցանքերը և բերքատու, լավորակ, մաքուր, հիվանդությունից զերծ ցանքերը առանձնացնել և այդպիսին հնձել, հավաքել ու կալսել առանձին՝ աշնանացանի համար, իսկ գարնանացանի համար առանձնացնել հատուկ հողամաս, կազմակերպել սերմնացներ, նրանց վրա սահմանել հատուկ հսկողություն և նրանց բերքը հավաքել, կալսել առանձին։

6. Վերանորոգել, կարգավորել բերքահավաքի գործիքները ու մեքենաները և նրանց պակասը լրացնել մինչև հունիսի մեկը։

7. Կարգավորել գյուղամիջյան և դաշտերի ճանապարհներն ու կամուրջները։

8. Հացահատիկի բերքահավաքը սկսել յուրաքանչյուր հասունացած հողակտորի վրա։ Ուկրաինկայի բերքահավաքը՝ սկսել մոմային շրջանում, 4—5 օրվա ընթացքում. տեղական աշնանացանը մոմային հասունացման շրջանում 5—8 օրվա ընթացքում. տարեկանը հնձել մոմային հասունացման շրջանում՝ 6—10 օրվա ընթացքում. գարնանացան թափվող տեսակները հնձել մոմային հասունացման շրջանում սկզբնական շրջանում 3—6 օրվա ընթացքում, իսկ դիմացկուն՝ չթափվող տեսակները 5—10 օրվա ընթացքում։

Գարու բերքահավաքը սկսել մոմային հասունացման ժամանակ, իսկ հնձելու և հավաքելու տևողությունը միասին 8—10 օրից չպետք է անցնի։

## 10. ՊԱՅՔԱՐ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ

Բերքահավաքից անմիջապես հետո այն հողամասերը, որոնք խիստ վարակված են



խոփուկով և մոլախոտերով, բազմախոփանի գութանով կատարել յերեսավար 8—10 սմ. խորությամբ։ Այս աշխատանքները պետք է կատարել բերքահավաքին զուգընթացաբար։ Քանի հողամասը չի չորացել, աշխատանքները պետք է ավարտել ոչ ուշ քան օգոստոսի 20-ը։ Խոզանավար կատարած հողամասերում, յերբ մոլախոտերը լավ կանաչել են, աշնանը կատարել հիմնական վար 18—20 սմ. խորությամբ՝ որպես ցրտահերկ, գարնան ցանքը կատարելու համար։

## 11. ԱՇՆԱՆ ՑԱՆՔ

1. Վաղ և ուշ ցելերը ամառվա ընթացքում պետք է մեկից յերկու անգամ փխրացնել զիգ-զագ փոցխերով։

2. Նախքան ցանքը պետք է կրկնահերկ անել հիմնական վարից սակավ խորությամբ (14—16 սմ. խորությամբ)։

3. Կատեգորիկ կերպով արգելվում է նստած (պնդացած) ցելերի վրա աշնանացան կատարել առանց կրկնահերկի։

4. Կրկնահերկը կատարել ցանքից 8—10 օր առաջ, այնպես հողը չի նստում, և ծլած հացահատիկի թփակալման հանգույցը դուրս է մնում, վարի հետեվանքով ձմեռը ցրտահարվում է։

5. Շարքացանին հատկացված հողամասը կրկնահերկ անելուց հետո ցանքի նախօրյակին մեկից յերկու յերես զիգզագ փոցխով փոցխել վարի հակառակ ուղղությամբ, ապա կատարել շարքացան՝ վարի ուղղությամբ։

6. Ցանքի խորությունը համապատասխանեցնել հողի խոնավության աստիճանին և հողի կազմությանը այս հաշվով՝ խոնավ և ծանր հողամասերում 3—4 սմ. խորությամբ, իսկ թեթեվ և չոր հողերում 4—6 սմ. խորությամբ։



## 12. ՑԱՆՔ ԿԱՏԱՐԵԼ ԸՍՏ ԳՅՈՒՂԵՐԻ, ՀԵՏԵՎՅԱԼ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ

| Գյուղերի անունը | Սկիզբը | Վերջ |
|---|---|---|
| Աթան, Ահնիձոր, Լորուտ, Շամուտ, Մարց, Քարինջ, Դսեղ, Ս. Բագդի, Տաշ, կաշատ։ | 1/9—36 թ. | 15/9—36 թ. |
| Ղաչաղան, Ծաթեր, Մղարթ, Կ. Աղեգի, Այգեհատ, Արդվի, Ուզունլար, Հագվի, Ամոջ։ | 5/9—36 թ. | 15/9—36 թ |
| Աքորի, Կաճաճկուտ, Սանահին, Ակներ, Հաղպատ, Նեղոց, Բենդիկ, Աղթալաններ։ | 10/9—36 թ. | 25/9—36 թ. |
| Արճիս, Լճկաձոր, Կողբ, Բարանա, Դովեղ, Թեղուտ, Ջուջեվան։ | 20/9—36 թ. | 5/10-36 թ. |
| Քոբբլու, Լամբալու, Այրումներ, Ճոճկան, Չալաչա։ | 5/10—36 թ. | 20/10—36 թ. |

## 13. ՊԱՅՔԱՐ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ

1. Նախքան վնասատուների յերևան գալը ցանքի տարածությունները լինելու յեն հսկողության տակ, և նրանց հանդես գալու առաջին իսկ օրից ձեռնարկվելու յե գործնական պայքար նրանց դեմ։

Գյուղխորհուրդներին կից այժմվանից կազմակերպվում են ցանքի պաշտպանության և վնասատուների դեմ պայքարի շտաբներ, վորոնք գործում են մինչև տնտեսական տարվա վերջը՝ Հողբաժնի և ՄՏԿ-ի ղեկավարությամբ։

Հիշված շտաբի պետը հանդիսանում է գյուղխորհրդի նախագահը։

Սույն պարտադիր ագրոկանոնները խախտողները յենթարկվում են դատական պատասխանատվության և դրամական տուգանքի մինչև 50 ռուբլու չափով կամ 15 օր հարկադիր աշխատանքի, իսկ չարամտորեն խախտողները, բացի դրամական տուգանքից, իբրև քրեական հանցագործներ յենթարկվում են պատասխանատվության



քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով։

Պաշտոնական անձիք և գյուղխորհրդի նախագահները, վորոնք կխախտեն սույն կանոնները, նրանց նկատմամբ՝ բացի կազմակերպչական տույժից, ձեռք կառնվեն նաև դատական միջոցառումներ։

Սույն կանոնների հսկողությունը դրվում է հողբաժնի, ՄՏԿ-ի, միլ. բաժնի և գյուղ խորհրդների վրա։

Սույն պարտադիր վորոշումը ուժի մեջ է մինչև 1636 թ. դեկտեմբերի 1-ը։

Ալլահվերդու շրջգործկոմի
նախագահ՝ Հ. ՍԻՄԱՆՅԱՆ

Քարտուղար՝ Յե. ԵՎՈՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0287057

245

14.643